Տոկոսների հաշվեգրումը դադարեցվում է, երբ հայտնի է դառնում, որ բավարարված չէ վերոնշյալ պայմաններից թեկուզ և մեկը:

14) հեջի հաշվապահական հաշվառումը,

Հեջավորման գործիք է համարվում նախատեսված ածանցյալ գործիքը կամ (միայն արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ռիսկի հեջավորման դեպքում) ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվը կամ ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունը, որի իրական արժեքը կամ դրամական միջոցների հոսքերը, ակնկալվում է, որ կչեզոքացնեն նախատեսված հեջավորված հոդվածի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները:

Հեջավորված հոդված է համարվում ակտիվը, պարտավորությունը, կայուն պարտավորվածությունը, մեծապես հավանական կանխատեսված գործարքը կամ զուտ ներդրումը արտերկրյա ստորաբաժանման մեջ, որը՝ (ա) Ընկերությանը ենթարկում է իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի փոփոխությունների ռիսկի, և (բ) նախատեսվում է որպես հեջավորվող:

Հեջի արդյունավետություն է համարվում այն աստիճանը, որքանով հեջավորված հոդվածի իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները, որոնք վերագրելի են հեջավորված ռիսկին, չեզոքացվում են հեջավորման գործիքի իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի փոփոխություններով:

Եթե հեջավորված հոդվածը ոչ ֆինանսական ակտիվ կամ ոչ ֆինանսական պարտավորություն է, այն նախատեսվում է որպես հեջավորված հոդված՝ (ա) արտարժույթային ռիսկերի համար, կամ

(բ) ամբողջությամբ բոլոր ռիսկերի համար, քանի որ դժվար է առանձնացնել և չափել դրամական միջոցների հոսքերի կամ իրական արժեքի փոփոխության համապատասխան մասը, որը վերագրելի է արտարժույթային ռիսկերից տարբեր այլ յուրահատուկ ռիսկերի:

Հեջավորման փոխհարաբերությունները լինում են երեք տեսակի՝

(ա) իրական արժեքի հեջ. ճանաչված ակտիվի կամ պարտավորության կամ չճանաչված կայուն պարտավորվածության, կամ այդ ակտիվի, պարտավորության կամ կայուն պարտավորվածության որոշակիացված մասի իրական արժեքի փոփոխությունների այնպիսի ենթարկվածության հեջ, որը վերագրելի է որոշակի ռիսկի և կարող է ազդեցություն ունենալ շահույթի կամ վնասի վրա.

(բ) դրամական միջոցների հոսքերի հեջ. դրամական միջոցների հոսքերի տատանումներին ենթարկվածության հեջ, որը՝ (i) վերագրելի է ճանաչված ակտիվի կամ պարտավորության (ինչպիսիք են փոփոխական տոկոսադրույքով պարտքի գծով ապագա տոկոսային բոլոր կամ որոշ վճարումները) կամ մեծապես հավանական կանխատեսված գործարքի հետ կապված որոշակի ռիսկի, և (ii) կարող է ազդեցություն ունենալ շահույթի կամ վնասի վրա.

(գ) արտերկրյա ստորաբաժանման մեջ զուտ ներդրման հեջ:

15) Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկություններում,

Ասոցիացված ընկերությունը կազմակերպություն է, որի վրա Ընկերությունը զգալի ազդեցություն է ունենում, և որը ոչ դուստր ընկերություն է, ոչ էլ համատեղ ձեռնարկությունում մասնակցության մասնաբաժին: Զգալի ազդեցությունը ներդրումների օբյեկտի ֆինանսական և գործառնական քաղաքականության վերաբերյալ որոշումների կայացմանը մասնակցելու իրավունքն է, բայց ոչ այդ քաղաքականության նկատմամբ վերահսկողությունը կամ համատեղ վերահսկողությունը:

2018 թվականին Ընկերությունը ներդրում է կատարել «Գլոբալ» ՓԲԸ-ում, որի հիմնական գործունեությունը ոչ հրապարակային ֆոնդերի կառավարման ծառայություն մատուցում է:

Ասոցիացված ընկերության անվանումը	Հիմնական գործունեություն	Ստեղծման վայրը և գործունեության հիմնական վայրը	Ընկերության սեփականության տոկոսի և ձայնի իրավունքի համամասնությունը	
			2025թ. Սեպտեմբեր 30	2024թ. Դեկտեմբեր 31
«Գլոբալ» ՓԲԸ	Ֆոնդի կառավարիչ	Երևան, Հայաստան	33%	33%

Համատեղ ձեռնարկությունը համատեղ համաձայնագիր է, որի համաձայն կողմերը, որոնք համատեղ վերահսկողություն ունեն համաձայնագրի նկատմամբ, իրավունք ունեն համատեղ համաձայնագրի զուտ ակտիվների նկատմամբ: Համատեղ վերահսկողությունը համաձայնագրի նկատմամբ հսկողության համաձայնեցված տարանջատումն է, որը գոյություն ունի միայն այն ժամանակ, երբ համապատասխան գործունեության մասին որոշումները պահանջում են Կողմերի միաձայն համաձայնությունը, որոնք կիսում են վերահսկողությունը:

2020թ. օգոստոսի 17-ին Արմբրոկ ԲԲԸ-ն և Հովսեփ Պատվականյանը հիմնադրեցին «Ինվեսթ ին Էյ Էմ» մասնավոր խորհրդատվական ընկերությունը:

Համատեղ ձեռնարկության անվանումը	Հիմնական գործունեություն	Գրանցման և գործունեության հիմնական վայրը	Ընկերության սեփականության տոկոսի և ձայնի իրավունքի համամասնությունը	
			2025թ. Սեպտեմբեր 30	2024թ. Դեկտեմբերի 31
«Ինվեսթ ին Էյ Էմ» ՓԲԸ	Խորհրդատվական ընկերություն	Երևան, Հայաստան	50%	50%

Ոչ մի այլ պայմանագրային համաձայնություն չկա, որտեղ նշված լինի, որ ինչպես Ընկերությունը, այնպես էլ «Ինվեսթ ին Էյ Էմ» ՓԲԸ-ի մեկ այլ բաժնետեր բաժնեմաս ունի նրա ակտիվներում, նրանք որոշակի համամասնությամբ պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և լրացուցիչ համաձայնություն չկա գործառնական և ռազմավարական կառավարման կոնկրետ բաժանման մասով:

«Ինվեսթ ին Էյ Էմ» ՓԲԸ-ն հանդիսանում է Ընկերության և մեկ այլ բաժնետիրոջ համատեղ ձեռնարկություն:

Ասոցիացված ընկերությունում կամ համատեղ ձեռնարկությունում ներդրումները հաշվի են առնվում բաժնային մասնակցության մեթոդով այն օրվանից, երբ ներդրումների օբյեկտը դառնում է ասոցացված ընկերություն կամ համատեղ ձեռնարկություն: Ասոցիացված ընկերությունում կամ համատեղ ձեռնարկությունում ներդրում ձեռք բերելու դեպքում ներդրման ինքնարժեքի ցանկացած ավելցուկը Ընկերության բաժնեմասի վրա ներդրման ենթակա անձի ճանաչելի ակտիվների և պարտավորությունների զուտ իրական արժեքի նկատմամբ, ճանաչվում է որպես գուդվիլ, որը ներառված է ներդրման հաշվեկշռի մեջ: Ներդրման արժեքի նկատմամբ ճանաչելի ակտիվների և պարտավորությունների զուտ իրական արժեքի Ընկերության մասնաբաժնի ցանկացած վերագնահատում, վերագնահատումից հետո, ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում այն ժամանակահատվածում, երբ ներդրումը ձեռք է բերվել:

17) հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ,

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով, հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկման բոլոր վնասները: Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Մաշվածությունը, ընդհանուր առմամբ, ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները, մնացորդային արժեքը և մաշվածության մեթոդը վերանայվում են

յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ հաշվի առնելով գնահատման ցանկացած փոփոխության ազդեցությունը հեռանկարային հիմունքով:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Ստորև ներկայացվում են հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների նշանակալի տարրերի օգտակար ծառայության գնահատված ժամկետները:

Վարձակալված ակտիվների բարելավումներ	20 տարի
Հեռահաղորդակցման սարքեր և համակարգիչներ	1-5 տարի
Փոխադրամիջոցներ	8 տարի
Այլ	1-8 տարի
Ոչ նյութական ակտիվներ	1-10 տարի

Վարձակալված ակտիվների բարելավումները ամորտիզացվում են վարձակալության ժամկետի և օգտակար ծառայության ժամկետի նվազագույնով, եթե առկա չէ ողջամիտ համոզվածություն այն մասին, որ Ընկերությունը կստանա ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում կամ կերկարաձգի վարձակալության ժամկետը:

18) հաճախորդների միջոցներ,

Եթե Ընկերությունը չունի հաճախորդի միջոցները ի շահ իրեն օգտագործելու պայմանագրով նախատեսված իրավունք, ապա հաճախորդի միջոցների հաշվառումը տարվում է հետհաշվեկշռային հոդվածներով և այդ միջոցները չեն ներառվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Եթե Ընկերությունն ունի հաճախորդի միջոցները ի շահ իրեն օգտագործելու պայմանագրով նախատեսված իրավունք, ապա այդ միջոցները դիտարկվում են որպես ֆինանսական ակտիվներ և դրանց նկատմամբ կիրառվում է ֆինանսական ակտիվների հաշվառման քաղաքականությունը:

19) Ընկերությունների կողմից թողարկված պարտքային արժեթղթեր,

Ընկերության կողմից թողարկված պարտքային արժեթղթերն իրենցից ներկայացնում են ֆինանսական պարտավորություններ և դրանց նկատմամբ կիրառվում է ֆինանսական պարտավորությունների հաշվառման քաղաքականությունը: Ընկերությունը չունի թողարկված պարտքային արժեթղթեր:

20) պայմանական դեպքեր և պայմանավորվածություններ,

Ընկերության համար պայմանական պարտավորություն է համարվում.

ա) հնարավոր պարտականությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում Ընկերության կողմից. կամ

բ) ներկա պարտականությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որը, սակայն, չի ճանաչվում հետևյալ պատճառներով՝

i. հավանական չէ, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք. կամ

ii. պարտականության գումարը չի կարող չափվել բավարար արժանահավատությամբ:

Ընկերության համար պայմանական ակտիվ է համարվում. հնարավոր ակտիվը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում Ընկերության կողմից:

Պայմանական ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում:

ա) Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ծնաչափերը հիմնականում դեռևս հասանելի չեն: Ընկերությունը չունի իր գործունեության դադարեցման, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորության ամբողջական ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ նշանակալի բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

բ) Դատական վարույթներ

Ընկերությունը ներգրավված չի դատական վարույթներում, որոնք կարող են նշանակալի ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

գ) Հարկում

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի: Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

20) ընդհանուր գործունեության ռիսկերի դիմաց կատարվող հատկացումների որոշման և դրանց հաշվապահական ձևակերպման հիմունքը,

Ընկերության համար պահուստ է համարվում անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն:

Պահուստը ճանաչվում է, երբ՝

ա) Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք. և

գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Եթե վերը նշված պայմանները չեն բավարարվում, ապա պահուստ չի ճանաչվում:

Հազվադեպ դեպքերում կարող է հստակ չլինել, թե արդյոք գոյություն ունի ներկա պարտականություն: Այս դեպքերում համարվում է, որ անցյալ դեպքը հանգեցրել է ներկա պարտականության, եթե, հաշվի առնելով հասանելի բոլոր վկայությունները, ավելի շատ հավանական է, քան ոչ, որ ներկա պարտականությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գոյություն ունի:

Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

Պահուստի լավագույն գնահատականը որոշելու համար հաշվի են առնվում այն ռիսկերը և անորոշությունները, որոնք անխուսափելիորեն ի հայտ են գալիս բազմաթիվ դեպքերում և հանգամանքներում:

Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Որպես զեղչման դրույք վերցվում է այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Ապագա դեպքերը, որոնք կարող են ազդեցություն թողնել պարտականությունը մարելու համար պահանջվող գումարի վրա, արտացոլվում են պահուստի գումարում, երբ բավականաչափ անկողմնակալ վկայություն կա, որ դրանք ի հայտ են գալու:

Ակտիվների ակնկալվող օտարումից օգուտները հաշվի չեն առնվում պահուստը չափելիս:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ ըստ էության որոշակի է, որ Ընկերության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի: Փոխհատուցումը դիտվում է որպես առանձին ակտիվ: Փոխհատուցման գծով ճանաչված գումարը չպետք է գերազանցի պահուստի գումարը:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պահուստին վերաբերող ծախսը կարող է ներկայացվել զուտ հիմունքով՝ հանելով փոխհատուցման գծով ճանաչված գումարը:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է:

Պահուստը օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Ապագա գործառնական վնասների համար պահուստներ չեն ճանաչվում:

Եթե Ընկերությունն ունի անբարենպաստ պայմանագիր, ապա այդ պայմանագրի գծով ներկա պարտականությունը ճանաչվում և չափվում է որպես պահուստ:

Վերակազմավորման գծով պահուստը պետք է ներառի միայն ուղղակիորեն վերակազմավորումից առաջացող ծախսումները, որոնք՝

ա) անպայմանորեն հետևանք են վերակազմավորման.

բ) կապված չեն Ընկերության անընդհատ գործունեության հետ:

21) կապիտալ և էմիսիոն եկամուտ,

Ընկերության կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է Ընկերության թողարկված բաժնետոմսերի քանակի և մեկ բաժնետոմսի անվանական արժեքի արտադրյալը:

Թողարկված բաժնետոմսերի իրացման արդյունքում ստացված գումարների իրական արժեքի և բաժնետոմսերի անվանական արժեքի դրական տարբերությունը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

22) փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաբանությունը,

Մի քանի փոխանակման փոխարժեքի առկայության դեպքում օգտագործվում է այն փոխարժեքը, որով տվյալ գործառնությունից բխող դրամական հոսքերը կամ հաշիվների մնացորդները կարող էին կարգավորվել (մարվել), եթե այդ դրամական միջոցների հոսքերը տեղի ունենային չափման ամսաթվի դրությամբ: Եթե երկու արժույթների միջև փոխանակման հնարավորությունը ժամանակավորապես անհնարին է, օգտագործվում է առաջին հաջորդող փոխարժեքը, որը կկիրառվեր հնարավոր փոխանակման դեպքում:

23) ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցումը,

Ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը հաշվանցվում են, և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարը այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը.

(ա) տվյալ պահին ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք:

(բ) մտադիր է կամ հաշվարկը (մարումը) իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման չափանիշների, փոխանցված ակտիվը և համապատասխան պարտավորությունը չեն հաշվանցվում:

24) Ֆինանսական ակտիվների վերադասակարգումները,

Ֆինանսական ակտիվների վերադասակարգումը կատարվում է այն դեպքում, երբ տեղի է ունեցել սկզբնական գնահատականներում փոփոխություն և վերադասակարգման արդյունքում ֆինանսական հաշվետվությունները կլինեն առավել արժանավատ:

«Ծանոթագրություն 3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ»

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Տոկոսային և նմանատիպ եկամուտներ		
1)	Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	155,597	65,546
2)	Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	3,172,610	2,668,734
3)	Տոկոսային եկամուտներ փոխառություններից	2,068	67
4)	Տոկոսային եկամուտներ ռեպո համաձայնագրերից	7,536	-
5)	Տոկոսային եկամուտներ սվոպից	-	-
6)	Այլ տոկոսային եկամուտներ	2,586	599
7)	Ընդամենը	3,340,397	2,734,946
2.	Տոկոսային և նմանատիպ ծախսեր		
1)	Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց	7,241	63,916
2)	Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի գծով	1,969,203	1,745,302
3)	Տոկոսային ծախսեր սվոպի գծով	-	-
4)	Տոկոսային ծախսեր ներդրումային ընկերությունների կողմից թողարկված արժեթղթերի դիմաց	-	-
5)	Այլ տոկոսային ծախսեր	22,133	14,487
6)	Ընդամենը	1,998,577	1,823,705
3.	Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	1,341,820	911,241

«Ծանոթագրություն 4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր»

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		
1)	Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով միջնորդավճարներից	-	-
2)	Արժեթղթերով գործարքներից միջնորդավճարներից	908,873	3,565,691
3)	Խորհրդատվական ծառայությունների գծով միջնորդավճարներից	-	16,779
4)	Արժեթղթերի տեղաբաշխման գծով միջնորդավճարներից	-	13,243
5)	Այլ ներդրումային ծառայությունների գծով միջնորդավճարներից	389,769	540,814
6)	Պահառության գործունեությունից	728,652	845,406
7)	Այլ միջնորդավճարներ	-	-
8)	Ընդամենը	2,027,294	4,981,933
2.	Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		
1)	Միջնորդավճարների գծով ծախսեր	622,809	998,811
3.	Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	1,404,485	3,983,122

«Ծանոթագրություն 6. Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Առևտրական նպատակներով պահվող ներդրումներից զուտ եկամուտներ		
1)	Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների առքուվաճառքից զուտ եկամուտ	784,873	3,347,973
2)	Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	434,293	393,884
3)	Ընդամենը	1,219,166	3,741,857
2.	Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ եկամուտներ		
1)	Վաճառքի համար մատչելի ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ	(138,624)	-
2)	Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	452,656	-
3)	Ընդամենը	314,032	-
3.	Արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտներ		

1)	Արտարժույթի առքուվաճառքից ստացված զուտ եկամուտ	114,335	564,244
2)	Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	(13,711)	(370,514)
3)	Ընդամենը	100,624	193,730
4.	Ընդամենը զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	1,633,822	3,935,587

«Ծանոթագրություն 7. Այլ գործառնական եկամուտ»

	Այլ գործառնական եկամուտ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ	-	1,524
2.	Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից զուտ եկամուտներ	-	-
3.	Այլ եկամուտներ, այդ թվում՝	51,775	59,334
	Մինչև մարման ժամկետ պահվող ներդրումների օտարումից զուտ եկամուտ	-	-
4.	Ընդամենը	51,775	60,858

«Ծանոթագրություն 8. Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին»

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	<u>Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով</u>		
1)	Պահուստի սկզբնական մնացորդ	8,566	2,459
2)	Պահուստին կատարված մասհանումներ		14,369
3)	Պահուստին կատարված մասհանումների վերադարձ	(6,591)	
4)	Պահուստին կատարված զուտ մասհանումներ	(6,591)	14,369
5)	Նախկինում հետհաշվեկշիռ դուրսգրված գումարների վերադարձ		
6)	Պահուստի օգտագործում		
7)	Պահուստի վերջնական մնացորդ	1,975	16,828
2.	<u>Հաճախորդների նկատմամբ պահանջների գծով</u>		
1)	Պահուստի սկզբնական մնացորդ	34,659	59,067
2)	Պահուստին կատարված մասհանումներ		-
3)	Պահուստին կատարված մասհանումների վերադարձ	(1,561)	(14,395)
4)	Պահուստին կատարված զուտ մասհանումներ	(1,561)	(14,395)
5)	Նախկինում հետհաշվեկշիռ դուրսգրված գումարների վերադարձ	(626)	7,258

6)	Պահուստի օգտագործում		
7)	Պահուստի վերջնական մնացորդ	32,472	51,930
3.	Ներդրումների գծով		
1)	Պահուստի սկզբնական մնացորդ	83,084	57,597
2)	Պահուստին կատարված մասհանումներ		18,154
3)	Պահուստին կատարված մասհանումների վերադարձ	3,879	
4)	Պահուստին կատարված զուտ մասհանումներ	3,879	18,154
5)	Նախկինում հետհաշվեկշիռ դուրսգրված գումարների վերադարձ		
6)	Պահուստի օգտագործում		
7)	Պահուստի վերջնական մնացորդ	86,963	75,751
4.	Այլ ակտիվների գծով		
1)	Պահուստի սկզբնական մնացորդ	72,985	55,863
2)	Պահուստին կատարված մասհանումներ	16,002	
3)	Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		(13,966)
4)	Պահուստին կատարված զուտ մասհանումներ	16,002	(13,966)
5)	Նախկինում հետհաշվեկշիռ դուրսգրված գումարների վերադարձ		
6)	Պահուստի օգտագործում		-
7)	Պահուստի վերջնական մնացորդ	88,987	41,897

«Ծանոթագրություն 9. Ընդհանուր վարչական ծախսեր» ծանոթագրության տարրերն են՝

	Ընդհանուր վարչական ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	1,697,653	5,066,557
2.	Ծախսեր սոցիալական ապահովության վճարների գծով	-	-
3.	Գործուղման և ուսուցման գծով ծախսեր	16,696	20,698
4.	Անձնակազմի այլ ծախսեր	90	95
5.	Գործառնական վարձակալության գծով ծախսեր	-	-
6.	Ներդրումային ընկերության շենքի և սարքավորումների, փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր	4,097	3,174
7.	Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	68,879	64,552
8.	Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	9,832	9,287
9.	Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	14,476	14,197
10.	Տրանսպորտային ծախսեր	-	-
11.	Այլ վարչական ծախսեր	201,178	157,654
12.	Ընդամենը	2,012,901	5,336,214

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 58 մարդ է:

Մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձը 1,765,992 հազ.դրամ է:

«Ծանոթագրություն 10. Այլ գործառնական ծախսեր»

	<u>Այլ գործառնական ծախսեր</u>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Հասարակական կապերի գծով ծախսեր	5,231	3,684
2.	Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	78,266	48,349
3.	Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	8,041	7,386
4.	Այլ ծախսեր	7,580	18,584
5.	Ընդամենը	99,118	78,003

«Ծանոթագրություն 12. Շահութահարկի գծով ծախս»

	<u>Շահութահարկի գծով ծախս</u>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Ընթացիկ հարկի գծով ծախս	261,333	585,717
2.	Տվյալ ժամանակաշրջանում ճանաչված նախորդ ժամանակաշրջանների ընթացիկ հարկի ճշգրտումները	-	(10,368)
3.	Հետաձգված հարկի գծով ծախս (փոխհատուցում)	115,093	81,399
4.	Ընդամենը	376,426	656,748

1) գործող օրենսդրության համաձայն կիրառվող շահութահարկի դրույքաչափը և շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

		Հաշվետու ժամանակա- շրջան	Արդյունա- վետ դրույքաչափ (%)	Նախորդ ժամանա- կաշրջան	Արդյունա- վետ դրույքաչափ (%)
1.	Շահույթը մինչև հարկումը	2,357,852		3,526,036	
2.	Շահութահարկ 18% դրույքաչափով	424,413	18%	634,686	18%
3.	Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի ճշգրտումներ ոչ ժամանակավոր տարբերությունների գծով				
4.	Չհարկվող եկամուտներ				
5.	Չնվազեցվող ծախսեր	(47,987)	(2.0)%	22,062	0.6%
6.	Նախորդ տարվա հաշվարկված հարկային ծախսի ճշտում				
7.	Շահութահարկի գծով ծախս	376,426	16%	656,748	18.6%

3) Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը.

		Մնացորդը Նախորդ Ժամանակ ա-շրջանի դրությամբ	Ֆինանսական նարդյունք- ներով ճանաչված	Սեփական կապիտալու մ ճանաչված	Մնացորդը հաշվետու Ժամանակ ա-շրջանի դրությամբ
1.	Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝	100,514	(12,955)	-	87,559
1)	Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ գծով	1,542	(893)	-	649
2)	Հիմնական միջոցների գծով	713	-	-	713
3)	Այլ ակտիվների գծով	19,376	2,322	-	21,698
4)	Վարձակալության պարտավորությունների գծով	27,128	17,628	-	44,756
5)	Այլ պարտավորությունների գծով	51,755	(32,012)	-	19,743
2.	Հետաձգված հարկային պարտավոր- ություններ, այդ թվում՝	(459,920)	(102,138)	(37,216)	(599,274)
1)	Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով	(67,836)	(35,124)	-	(102,960)
2)	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով	(370,170)	(42,485)	(37,216)	(449,871)
3)	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների գծով	(21,914)	(24,529)	-	(46,443)
3.	Զույր հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	(359,406)	(115,093)	(37,216)	(511,715)

«Ծանոթագրություն 13. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ»

	Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	Հաշվետու Ժամանակաշրջան	Նախորդ Ժամանակաշրջան
1.	Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո	1,981,426	2,869,288
2.	Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	-	-
3.	Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)	1,981,426	2,869,288
4.	Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	267,150	267,150
5.	Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	7.42	10.74
6.	Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նույնացված շահույթ	7.42	10.74

«Ծանոթագրություն 14 Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ Կենտրոնական բանկում»

1)	<u>Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ Կենտրոնական բանկում</u>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր	-	-
2.	Կանոնադրական կապիտալի կուտակման հաշիվ Կենտրոնական բանկում	-	-
3.	Դեպոնացված միջոցներ Կենտրոնական բանկում	-	-
4.	Հաշվեգրված տոկոսներ	-	-
5.	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ Կենտրոնական բանկում	-	-

«Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, որոնք ներառվում են դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում»:

	Սկզբին	Վերջին
Հաշվետու ժամանակաշրջանի	6,160,633	1,425,542
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի	6,569,219	5,164,675

«Ծանոթագրություն 15. Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	<u>Ընթացիկ հաշիվներ</u>		
1)	Հայաստանի Հանրապետության բանկերում	845,817	4,713,232
2)	Այլ բանկերում	70,691	46,760
3)	Դեպոնացված հաշիվներ բանկերում	-	-
4)	Հաշվեգրված տոկոսներ	-	-
5)	Ընդամենը	916,508	4,759,992
2.	<u>Տրամադրված փոխառություններ և ավանդներ, այլ պահանջներ</u>		
1)	Կենտրոնական բանկում՝	-	-
	Տրամադրված փոխառություններ և ավանդներ	-	-
	ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	-
	Այլ	-	-
2)	Բանկերում՝	-	-
	Տրամադրված փոխառություններ և ավանդներ	-	-
	ռեպո (հետգնման) համաձայնագրեր	-	-
	Արժեթղթերի փաթեթի կառավարում	-	-
	Այլ	-	-

3)	Ներդրումային և այլ ֆինանսական կազմակերպություններում	-	-
	Տրամադրված փոխառություններ և ավանդներ	-	-
	ռեպո (հետգնման) համաձայնագրեր	-	949,761
	Արժեթղթերի փաթեթի կառավարում	-	-
	Այլ	511,009	457,145
4)	Հաշվեգրված տոկոսներ	-	2,301
5)	Ընդամենը	511,009	1,409,207
3.	Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 8)	(1,975)	(8,566)
4.	Զուտպահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,425,542	6,160,633

«Ծանոթագրություն 16. Պահանջներ հաճախորդների նկատմամբ»

	<u>Պահանջներ հաճախորդների նկատմամբ</u>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Տրամադրված փոխառություններ, այդ թվում՝	42,952	632
	Հայաստանի Հանրապետության կառավարությանը	-	
	Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին	-	
2.	ռեպո (հետգնման) համաձայնագրեր	-	
3.	Արժեթղթերի փաթեթի կառավարում	-	
4.	Այլ	450,720	467,619
5.	Նշված հոդվածների գծով հաշվեգրված տոկոսներ	345	3
6.	Ընդամենը պահանջներ	494,017	468,254
7.	Հաճախորդների նկատմամբ պահանջների հնարավոր կորուստների պահուստ (ծանոթագրություն 8)	(32,472)	(34,659)
8.	Ընդամենը զուտ պահանջներ	461,545	433,595

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հաճախորդներին տրամադրված չարժեզրկված և խնդրահարույց փոխառությունների կառուցվածքը.

	Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հաճախորդներին տրամադրված արժեզրկված փոխառությունների կառուցվածքը	Հաշվետու ժամանակաշրջան գումարը/քանակը	Նախորդ ժամանակաշրջան գումարը/քանակը
1.	Տրամադրված փոխառություններ, որից	42,952/3	632/1
2.	Արժեզրկված փոխառություններ, այդ թվում՝		
	Ժամկետանց	-	-
	վերանայված (վերաձևակերպված)	-	-
	Վերաֆինանսավորված	-	-
3.	Ընդամենը փոխառություններ	42,952/3	632/1
4.	Հաճախորդներին տրամադրված փոխառությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթագրություն 8)	-	-
5.	Ընդամենը զուտփոխառություններ	42,952/3	632/1

Հաճախորդների նկատմամբ պահանջների վերլուծություն

	Հաճախորդների նկատմամբ պահանջների վերլուծությունն ըստ հաճախորդների	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Բանկեր, այդ թվում՝	7,296	20,931
	Տրամադրված փոխառություններ	-	-
	ռեպո (հետգնման) համաձայնագրեր	-	-
	Այլ	7,296	20,931
2.	Այլ ֆինանսական կազմակերպություններ, այդ թվում՝	214,079	177,803
	Տրամադրված փոխառություններ	-	-
	ռեպո (հետգնման) համաձայնագրեր	-	-
	Այլ	214,079	177,803
3.	Պետական կազմակերպություններ, այդ թվում՝	-	-
	Տրամադրված փոխառություններ	-	-
	ռեպո (հետգնման) համաձայնագրեր	-	-
	Այլ	-	-
4.	Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող ոչ պետական կազմակերպություններ, այդ թվում՝	145,886	166,945
	խոշոր կազմակերպություններ	-	-
	փոքր և միջին կազմակերպություններ*	145,886	166,945
5.	Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք, այդ թվում՝	126,411	102,572
	Փոխառություններ	42,952	632
	ռեպո (հետգնման) համաձայնագրեր	-	-

	Այլ	83,459	101,940
6.	Անհատ ձեռնարկատերեր, այդ թվում՝	-	-
	Փոխառություններ	-	-
	ռեպո (հետգնման) համաձայնագրեր	-	-
7.	Հաշվեգրված տոկոսներ, այդ թվում՝	345	3
	տրամադրված փոխառությունների գծով	345	3
	ռեպո (հետգնման) համաձայնագրերի գծով	-	-
	այլ ակտիվների գծով	-	-
8.	Ընդամենը պահանջներ	494,017	468,254
9.	Հաճախորդների նկատմամբ պահանջների հնարավոր կորուստների պահուստ (ծանոթագրություն 8)	(32,472)	(34,659)
10.	Ընդամենը զուտ պահանջներ	461,545	433,595

Հաճախորդների նկատմամբ պահանջների աշխարհագրական վերլուծություն

	Հաճախորդների նկատմամբ պահանջների վերլուծությունն ըստ ռեզիդենտության	Հաշվետու ժամանակաշրջան	Տոկոսային հարաբերությունը	Նախորդ ժամանակաշրջան	Տոկոսային հարաբերությունը
1.	Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներ	130,576	26.43%	127,010	27.12%
2.	ԲԲԲ-/Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների ռեզիդենտներ	-	-	-	-
3.	ԲԲԲ-/Բաա3/-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող երկրների ռեզիդենտներ	363,096	73.50%	341,241	72.88%
4.	Հաշվեգրված տոկոսներ	345	-	3	-
5.	Ընդամենը	494,017	-	468,254	

« Ծանոթագրություն 17. Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ»

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Պետական արժեթղթեր		
1)	Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր, այդ թվում՝		
	Գանձապետական պարտատոմսեր	4,178,521	3,369,690
	Կենտրոնական բանկի պարտատոմսեր	-	-
	Այլ	-	-
2)	ԲԲԲ- /Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների պետական արժեթղթեր, այդ թվում՝	-	-
	Գանձապետական պարտատոմսեր	-	1,405,266
	Կենտրոնական բանկի պարտատոմսեր	-	-
	Այլ	-	-
3)	ԲԲԲ- /Բաա3/-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող երկրների պետական արժեթղթեր		
	Գանձապետական պարտատոմսեր	-	-
	Կենտրոնական բանկի պարտատոմսեր	-	-
	Այլ	-	-
4)	Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող պետական արժեթղթեր	4,178,521	4,774,956

2.	Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր	Ցուցակված	Չցուցակված	ցուցակված	Չցուցակված
1)	Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի	-	-	-	-
	Երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
	Կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
	Բաժնային գործիքներ	-	-	-	-
	Այլ	-	-	-	-
2)	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Գ -» և բարձր վարկանիշ ստացած թողարկողի	-	-	-	-
	Երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
	Կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
	Բաժնային գործիքներ	-	-	-	-
	Այլ	-	-	-	-

3)	ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի	-	-	-	-
	Երկարաժամկետ պարտքային գործիքներ	1,289,089	-	307,279	-
	Կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
	Բաժնային գործիքներ	690,325	-	479,531	-
	Այլ	-	2,585,530	-	1,046,279
4)	Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր	1,979,414	2,585,530	786,810	1,046,279
3.	Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	Ցուցակված	Չցուցակված	Ցուցակված	չցուցակված
1)	Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի				
	Երկարաժամկետ պարտքային գործիքներ	931,821	-	714,999	-
	Կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
	Բաժնային գործիքներ	4,043	-	73,938	-
	Այլ	-	-	-	-
2)	ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի				
	Երկարաժամկետ պարտքային գործիքներ	249,531	-	-	-
	Կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
	Բաժնային գործիքներ	10,034	-	-	-
	Այլ	-	-	-	-
3)	Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	1,195,429	-	788,937	-
4)	Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր	3,174,843	2,585,530	1,575,747	1,046,279
4.	Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ				
1)	Տրամադրված փոխառություններ, դեբիտորական պարտքեր		-		-
	Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող փոխառությունների տրամադրված փոխառություններ		-		-
	ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ		-		-

	չունեցող փոխառուների տրամադրված փոխառություններ		
	Այլ	-	-
2)	Ածանցյալ գործիքներ	-	-
	Ֆյուչերս	-	-
	Ֆորվարդ	-	-
	Օպցիոն	-	-
	Սվոպ	-	-
	Այլ	-	-
3)	Ընդամենը	-	-
5.	Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	9,938,894	7,396,982

«Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների» դասում հաշվառվող ռեպո համաձայնագրով վաճառված պարտատոմսերի արժեքը 118,187 հազ դրամ է:

«Ծանոթագրություն 18. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ»

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	<u>Պետական արժեթղթեր</u>		
1)	Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսեր		
	Գանձապետական պարտատոմսեր	-	-
	Կենտրոնական բանկի պարտատոմսեր	45,461,488	43,433,432
	Այլ	-	-
2)	ԲԲԲ-/Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների պետական արժեթղթեր		
	Գանձապետական պարտատոմսեր	-	-
	Կենտրոնական բանկի պարտատոմսեր	-	-
	Այլ	-	-
3)	ԲԲ+/Բա1/ և ցածր վարկանիշ ունեցող, վարկանիշ չունեցող երկրների պետական արժեթղթեր		
	Գանձապետական պարտատոմսեր	-	-
	Կենտրոնական բանկի պարտատոմսեր	-	-
	Այլ	-	-
4)	Ընդամենը պետական արժեթղթեր	45,461,488	43,433,432
5.	Ընդամենը վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	45,461,488	43,433,432

«Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների» դասում հաշվառվող ռեպո համաձայնագրով վաճառված ՀՀ պետական պարտատոմսերի արժեքը 44,282,782 հազ. դրամ է:

«Ծանոթագրություն 20. Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում»

	<u>Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների շարժը</u>	<u>Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում</u>
1.	Մնացորդը ժամանակաշրջանի սկզբում	308,329
2.	Ավելացում	-
3.	Օտարում (վաճառք)	-
4.	Արժեքի արժեզրկում	-
5.	Մնացորդը ժամանակաշրջանի վերջում	308,329

	<u>Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներ</u>	<u>Հաշվետու ժամանակաշրջան</u>	<u>Նախորդ ժամանակաշրջան</u>
1.	Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներ	308,329	308,329
2.	Համատեղ վերահսկվող միավորներում ներդրումներ	-	-
3.	Դուստր ներդրումային ընկերություններում ներդրումներ	-	-
4.	Այլ դուստր ընկերություններում ներդրումներ	-	-
5.	Շահաբաժիններ	-	-
6.	Ընդամենը	308,329	308,329

<u>Անձի անվանումը</u>	<u>Հիմնական գործունեությունը</u>	<u>Գրանցման երկիրը</u>	<u>Ներդրման ամսաթիվը</u>	<u>Ներդրումը (հազար դրամ)</u>	<u>Բաժնեմասը %</u>
1.«ԳԼՈՔԱԼ» ՓԲԸ	Ներդրումային ֆոնդերի կառավարում	ՀՀ	12/04/2017	25,000.00	33.33
2.«ԻՆՎԵՍՏ ԻՆ Էյ ԷՄ» ՓԲԸ	Ներդրումային ծրագրերի աջակցություն	ՀՀ	01/09/2020	24,000.00	50

«ԻՆՎԵՍՏ ԻՆ Էյ ԷՄ» ՓԲԸ-ում ներդրումը ամբողջությամբ արժեզրկվել է:

«Ծանոթագրություն 21. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»

Հիմնական միջոցներ

	Հոդվածի անվանումը	Օգտագործման իրավունքի ձևով	Համակարգիչներ և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հիմնական միջոցների գծով կապիտալ	Վարձակաճ հիմնական միջոցների	Ընդամենը
1.	Սկզբնական արժեք							
2.	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	210,510	42,372	49,927	126,583	-	116,297	545,689
3.	Ավելացում	-	18,124	137,916	26,656	-	-	182,696
4.	Օտարում	-	(1,218)	(17,580)	(3,206)	-	-	(22,004)
5.	Արժեզրկում	-	-	-	-	-	-	-
6.	Վերագնահատում	-	-	-	-	-	-	-
7.	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	210,510	59,278	170,263	150,033	-	116,297	706,381
8.	Ավելացում	307,402	5,933	-	27,104	-	1,589	342,028
9.	Օտարում	(210,510)	-	-	-	-	-	(210,510)
10.	Վերագնահատում	-	-	-	-	-	-	-
11.	Արժեզրկման հակադարձում	-	-	-	-	-	-	-
12.	Վերագնահատումից մաշվածության ճշգրտում	-	-	-	-	-	-	-
13.	Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	307,402	65,211	170,263	177,137	-	117,886	837,899
14.	Կուտակված Մաշվածություն							
15.	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	68,479	35,603	41,859	25,999	-	12,149	184,089
16.	Ավելացում	20,290	10,726	16,635	10,899	-	5,812	64,362
17.	Օտարում	-	(1,291)	(13,084)	(3,001)	-	-	(17,376)
18.	Արժեզրկում	-	-	-	-	-	-	-
19.	Վերագնահատում	-	-	-	-	-	-	-
20.	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	88,769	45,038	45,410	33,897	-	17,961	231,075
21.	Ավելացում	43,627	8,279	12,916	9,020	-	4,424	78,266
22.	Օտարում	(90,715)	-	-	-	-	-	(90,715)
23.	Վերագնահատումից մաշվածության ճշգրտում	-	-	-	-	-	-	-
24.	Արժեզրկում	-	-	-	-	-	-	-

25.	Մնացորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	41,681	53,317	58,326	42,917	-	22,385	218,626
26.	<u>Զուտ հաշվեկշռային արժեք</u>							
27.	<u>Նախորդ հաշվետու ժամանակա-շրջանի վերջում</u>	121,741	14,240	124,853	116,136	-	98,336	475,306
28.	Հաշվետու ժամանա-կաշրջանի վերջում	265,721	11,894	111,937	134,220	-	95,501	619,273

Ոչ նյութական ակտիվներ

	Հոդվածի անվանումը	Համակարգ- չային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Հեղինակայի իրավունքներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ոչ նյութական ակտիվների գծով կապիտալ ներդրումներ	Ընդամենը
1.	<u>Սկզբնական արժեք</u>						
2.	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	29,333	-	-	-	-	29,333
3.	Ավելացում	5,574	-	-	-	-	5,574
4.	Օտարում	-	-	-	-	-	-
5.	Արժեզրկում	-	-	-	-	-	-
6.	Վերագնահատում	-	-	-	-	-	-
7.	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	34,907	-	-	-	-	34,907
8.	Ավելացում	2,134				13,282	15,416
9.	Օտարում	-	-	-	-	-	-
10.	Վերագնահատում	-	-	-	-	-	-
11.	Արժեզրկում	-	-	-	-	-	-
12.	Վերագնահատում իցմաշվածության ճշգրտում	-	-	-	-	-	-
13.	Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	37,041	-	-	-	13,282	50,323
14.	<u>Կուտակված Մաշվածություն</u>						
15.	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	3,877	-	-	-	-	3,877
16.	Ավելացում	9,856	-	-	-	-	9,856
17.	Օտարում	-	-	-	-	-	-
18.	Արժեզրկում	-	-	-	-	-	-
19.	Վերագնահատում	-	-	-	-	-	-

20.	Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	13,733	-	-	-	-	13,733
21.	Ավելացում	8,041	-	-	-	-	8,041
22.	Օտարում	-	-	-	-	-	-
23.	Վերագնահատումից մաշվածության ճշգրտում	-	-	-	-	-	-
24.	Արժեզրկում	-	-	-	-	-	-
25.	Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	21,774	-	-	-	-	21,774
26.	<u>Զուտ հաշվեկշռային արժեք</u>	-	-	-	-	-	-
27.	Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	21,174	-	-	-	-	21,174
28.	Հաշվետու ժամանակաշրջանի վերջում	15,267	-	-	-	13,282	28,549

«Ծանոթագրություն 22. Այլ ակտիվներ»

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	-	-
2.	Դեբիտորական պարտքեր մատակարարների գծով	-	-
3.	Կանխավճարներ աշխատակիցներին	-	-
4.	Կանխավճարներ մատակարարներին	701,253	110,275
5.	Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով	291,058	-
6.	Այլ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	138,117	111,397
7.	Ընդամենը	1,130,428	221,672
8.	Այլ ակտիվների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթագրություն 8)	(88,987)	(72,985)
9.	Ընդամենը	1,041,441	148,687
10.	<u>Այլ ակտիվներ</u>	-	-
11.	Պահեստ	-	-
12.	Բռնագանձված գրավ և վաճառքի համար պահվող ակտիվներ	-	-
13.	Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	-	-
14.	Հեջավորման ածանցյալ գործիքներ	-	-
15.	Այլ ակտիվներ	-	-
16.	Ընդամենը այլ ակտիվներ	1,041,441	148,687

«Ծանոթագրություն 23. Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	Կենտրոնական բանկ		
	Փոխառություններ	-	-
	Ռեպո համաձայնագրեր	-	-
	Այլ	-	-
2.	Հայաստանի Հանրապետության բանկեր	40,404,177	37,442,819
	Փոխառություններ	-	-
	Ռեպո համաձայնագրեր	40,404,177	37,442,819
	Այլ	-	-
3.	ԲԲԲ-/Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող բանկեր	-	-
	Փոխառություններ	-	-
	ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	-
	Այլ	-	-
4.	ԲԲԲ-/Բաա3/-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող բանկեր	-	-
	Փոխառություններ	-	-
	Ռեպո համաձայնագրեր	-	-
	Այլ	-	-
5.	Հաշվեգրված տոկոսներ	64,918	53,694
6.	Ընդամենը	40,469,095	37,496,513
7.	Ֆինանսական կազմակերպություններ	-	-
	Փոխառություններ	-	-
	ռեպո (հետգնման) պայմանագրեր	425,194	214,142
	Այլ	-	-
8.	Հաշվեգրված տոկոսներ	91	61
9.	Ընդամենը	425,285	214,203
10.	Ընդամենը պարտավորություններ բանկերի և միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	40,894,380	37,710,716

«Ծանոթագրություն 24. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ»

		Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
1.	<u>Հայաստանի Հանրապետության Կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ</u>	-	-
1)	Ռեպո համաձայնագրեր	-	-
2)	Փոխառություններ	-	-
3)	Այլ	-	-
4)	Հաշվարկված տոկոսներ	-	-
5)	Ընդամենը	-	-
2.	<u>Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ իրավաբանական անձանց, հիմնարկների նկատմամբ</u>	-	-
1)	Ռեպո համաձայնագրեր	-	-
2)	Փոխառություններ	-	-
3)	Այլ	70,002	622,535
4)	Հաշվարկված տոկոսներ	-	-
